ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 դեկտեմբերի 2023 թվականի N 1417-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 131-Ա և ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 10-ի թիվ 269-Ա որոշումների համաձայն՝ Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող՝ Արմավիր քաղաքի, Բաղրամյան փողոց 9 հասցեում գտնվող «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 12 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի վարչական շենքի առաջին հարկից 102.6 քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով՝ 3 /երեք/ տարի ժամկետով տրամադրվել է «Արմավիրի մարզի անհայտ կորած ազատամարտիկների հարազատների» հասարակական կազմակերպությանը՝ «Արծիվ 13» ջոկատի հիշատակին թանգարան կազմակերպելու նպատակով, համաձայն որի ՀՀ Արմավիրի համայնքապետարանի և «Արմավիրի մարզի անհայտ կորած ազատամարտիկների հարազատների» հասարակական կազմակերպության միջև 2019 թվականի մայիսի 21-ին կնքվել է անշարժ գույքի անհատույց օգտագործման մասին պայմանագիր՝ /սեղ.նո 3914/:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով «Արմավիրի մարզի անհայտ կորած ազատամարտիկների հարազատների» հասարակական կազմակերպության նախագահ՝ Արտակ Մկրտչյանի 2023 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 6605 գրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիր համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 10-ի թիվ 269-Ա որոշման համաձայն՝ «Արմավիրի մարզի անհայտ կորած ազատամարտիկների հարազատների» հասարակական կամակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված՝ Արմավիր քաղաքի, Բաղրամյան փողոց 9 հասցեում գտնվող «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 12 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի վարչական շենքի առաջին հարկից 102.6 քմ մակերեսով տարածքը հետ վերցնել Արմավիրի համայնքապետարանի տնօրինության տակ:
2. Ուժը կորցրած ճանաչել Արմավիր համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 10-ի թիվ 269-Ա որոշումն, իսկ դրա հիման վրա կնքված՝ 2019 թվականի մայիսի 21-ի՝ /սեղ. նո. 3914/ անշարժ գույքի անհատույց օգտագործման մասին պայմանագիրը՝ համարել լուծված:

Հանձնարարել «Արմավիրի մարզի անհայտ կորած ազատամարտիկների հարազատների» հասարարական կազմակերպության նախագահ՝ Արտակ Մկրտչյանին՝ տարածքը վերարադարձնել բարեկարգ վիճակում:

1) սույն որոշմամբ դադարող գույքային իրավունքը ենթակա է պետական գրանցման՝ Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտում՝ համատեղ դիմումի հիման վրա:

2) անհատույց օգտագործման իրավունքից հրաժարվողն իր միջոցների հաշվին պետք է վճարի սույն որոշմամբ դադարող իրավունքի պետական գրանցման հետ կապված վճարները:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023թ. դեկտեմբերի 01
ք. Արմավիր